ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 15 » հոկտեմբերի 2021թ. № 177-Ա

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ ենթակետերով, ինչպես նաև հիմք ընդունելով Լոռի Բերդ համայնքի ավագանու 2019թ. դեկտեմբերի 27-ի թիվ 58-Ա որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը հաստատելու մասին» Լոռի Բերդ համայնքի ավագանու 2017թ. դեկտեմբերի 27-ի թիվ 14-Ա որոշումը.

որոշում եմ.

1. Լոռի Բերդ համայնքի բնակչին համայնքի բյուջեից հատկացնել սոցիալական օգնություն համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում հատկացված գումարը տրամադրել բնակչին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Ա.Տ

2021թ. հոկտեմբերի 15
գ. Լոռի Բերդ

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ղեկավարի
2021թ. հոկտեմբերի 15-ի № 177-Ա որոշման

Ց Ո Ւ Ց Ա Կ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1. Լիլիթ Աշոտի Շահբազյան – 30.000 ՀՀ դրամ, նորածին երեխա ունենալու կապակցությամբ, գյուղ Ագարակ
2. Միեր Սահակի Մելիքջանյան – 30.000 ՀՀ դրամ, նորածին երեխա ունենալու կապակցությամբ, գյուղ Բովաձոր
3. Աղունիկ Աշոտի Չատինյան – 30.000 ՀՀ դրամ, նորածին երեխա ունենալու կապակցությամբ, գյուղ Կողես
4. Սևուկ Գյուլվերի Այվազյան – 30.000 ՀՀ դրամ, նորածին երեխա ունենալու կապակցությամբ, գյուղ Սվերդլով
5. Հայրապետ Սամվելի Ջուլհակյան – 40.000 ՀՀ դրամ, հարազատին կորցնելու կապակցությամբ, գյուղ Ուռուտ
6. Ֆրոնտինա Գարիի Առուշանյան - 40.000 ՀՀ դրամ, հարազատին կորցնելու կապակցությամբ, գյուղ Լոռի Բերդ
7. Սահակ Ռազմիկի Մելիքջանյան – 40.000 ՀՀ դրամ, հարազատին կորցնելու կապակցությամբ, գյուղ Բովաձոր:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ, գ. Լոռի Բերդ
հեռ. 0256-2-14-75
էլ. փոստ: loriberd.lori@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«15» հոկտեմբերի 2021թ. № 176-Ա

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասով՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. Գումարել Լոռի Բերդ համայնքի ավագանու հերթական նիստ 2021թ. հոկտեմբերի 22-ին ժամը 11:00-ին Լոռի Բերդի համայնքապետարանում՝ հետևյալ օրակարգով՝ համաձայն հավելվածի:

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Կ.տ

2021թ. հոկտեմբերի 15
գ. Լոռի Բերդ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

Անցկացման վայրը. Լոռի Բերդի համայնքապետարան

Անցկացման ժամանակը. 22.10.2021թ. ժամը 11:00-ին

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսքը:

1. 1. Գումարել Լոռի Բերդ համայնքի ավագանու նիստ 2021թ. հոկտեմբերի 22-ին ժամը 11:00-ին Լոռի Բերդի համայնքապետարանում՝ հետևյալ օրակարգով.

1) Լոռի Բերդ համայնքի ավագանու 2021 թվականի հոկտեմբերի 22-ի նիստի օրակարգի հաստատում:

(Զեկուցող՝ Ա. Ներսիսյան)

2) Լոռի Բերդ համայնքի 2021 թվականի բյուջեի երրորդ եռամսյակի կատարման մասին Լոռի Բերդ համայնքի ղեկավարի հաղորդումը ի գիտություն ընդունելու մասին:

(Զեկուցող՝ Ա. Ներսիսյան)

3) Լոռի Բերդ համայնքի Ագարակ բնակավայրի 100 տարեկան բնակչին՝ «Տարեցների միջազգային օրվա» կապակցությամբ դրամական աջակցություն ցուցաբերելու մասին

(Զեկուցող՝ Ա. Մարտիրոսյան)

4) Լոռի Բերդ համայնքի Ագարակ գյուղի վարչական տարածքում գտնվող, քաղաքացու սեփականություն հանդիսացող հողամասի նպատակային նշանակության փոփոխման և Լոռի Բերդ համայնքի ավագանու 23.09.2021 թվականի թիվ 53-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին:

(Զեկուցող՝ Ք. Մելիքջանյան)

5) Լոռի Բերդ համայնքի Ուռուտ գյուղի վարչական տարածքում գտնվող, քաղաքացու սեփականություն հանդիսացող հողամասի նպատակային նշանակության փոփոխման մասին:

(Զեկուցող՝ Ք. Մելիքջանյան)

6) Լոռի Բերդ համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի գործառնական նշանակությունը փոփոխելու, համայնքային սեփականություն ճանաչելու և աճուրդ-վաճառքով օտարելու մասին:

(Զեկուցող՝ Ք. Մելիքջանյան)

2. Ելույթներ, առաջարկություններ:

3. Նիստի փակում:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ, գ. Լոռի Բերդ
հեռ. 0256-2-14-75
էլ. փոստ: loriberd.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«11» հոկտեմբերի 2021թ. № 175-Ա

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔՆ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ՝ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԽՈՏՀԱՐՔԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 17.09.2009 թվականի «ՀՀ գյուղատնտեսական նշանակության հողերի հողատեսքերի փոփոխման մասին» թիվ 1066-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ կետով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով

ո ր ո շ ու մ ե մ.

1. Լոռի Բերդ համայնքի Սվերդլով բնակավայրի վարչական տարածքում գտնվող, ՀՀ կառավարության 09.12.2005 թ. թիվ 2352-Ն որոշմամբ Սվերդլով համայնքին փոխանցված 06-101-0146-0001 կադաստրային ծածկագրով 0.4632 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսքը փոխադրել նույն գնահատման խմբի գյուղատնտեսական ավելի բարձրարժեք հողատեսքի՝ հինգերորդ կարգի խոտհարքի:
2. Համայնքի հողային հաշվեկշռում կատարել սույն որոշումից բխող համապատասխան փոփոխություններ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Կ.տ

2021թ. հոկտեմբերի 11
գ. Լոռի Բերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ, գ. Լոռի Բերդ
հեռ. 0256-2-14-75
էլ. փոստ: loriberd.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«11» հոկտեմբերի 2021թ. № 174-Ա

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔՆ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ՝ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԽՈՏՀԱՐՔԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 17.09.2009 թվականի «ՀՀ գյուղատնտեսական նշանակության հողերի հողատեսքերի փոփոխման մասին» թիվ 1066-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ կետով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով

ո ր ո շ ում ե մ.

1. Լոռի Բերդ համայնքի Սվերդլով բնակավայրի վարչական տարածքում գտնվող, ՀՀ կառավարության 09.12.2005 թ. թիվ 2352-Ն որոշմամբ Սվերդլով համայնքին փոխանցված 06-101-0145-0001 կադաստրային ծածկագրից առանձնացված 1.80627 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության ցածրարժեք չորրորդ կարգի արոտ հողատեսքը փոխադրել նույն գնահատման խմբի գյուղատնտեսական ավելի բարձրարժեք հողատեսքի՝ չորրորդ կարգի խոտհարքի:
2. Համայնքի հողային հաշվեկշռում կատարել սույն որոշումից բխող համապատասխան փոփոխություններ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

Կ.տ

2021թ. հոկտեմբերի 11
գ. Լոռի Բերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ, գ. Լոռի Բերդ
հեռ. 0256-2-14-75
էլ. փոստ: loriberd.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«11» հոկտեմբերի 2021թ. № 173-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ, ԼՈՌԻ ԲԵՐԴ ԳՅՈՒՂԻ 06-044-0007-0008 ԾԱԾԿԱԳՐԻ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ ՓՈՂՈՑ, 1-ԻՆ ՓԱԿՈՒՂԻ ԹԻՎ 2 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՄԱԿԵՐԵՍԸ ՃՇՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լոռի Բերդ համայնքի Լոռի Բերդ գյուղի բնակիչներ՝ Ռաֆիկ Օհանիկի Ասուլյանի և Լիդա Լևոնի Ասուլյանի կողմից ներկայացված համատեղ դիմումը՝ և հաշվի առնելով՝ ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնք, գ. Լոռի Բերդ, Սայաթ-Նովա փողոց, 1-ին փակուղի թիվ 2 հասցեում գտնվող, Ռաֆիկ Օհանիկի Ասուլյանին և Լիդա Լևոնի Ասուլյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող հողամասի վրա ինքնակամ կառուցված շինությունները օրինականացնելու խնդրանքը, 15.08.2003թ. N18111263 անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման վկայականը, «ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ» ԱՁ-ի կողմից կազմված տեղագրական հատակագիծը, նկատի ունենալով այն հանգամանքը, որ տվյալ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը և քանի որ, շինությունը կառուցված չէ քաղաքաշինության նորմերի և կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ուստի՝ ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24 կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի թիվ 912-Ն որոշման պահանջներով՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. Օրինականացնել՝ ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի, գ. Լոռի Բերդ Սայաթ-Նովա փողոց, 1-ին փակուղի թիվ 2 հասցեում գտնվող՝ Ռաֆիկ Օհանիկի Ասուլյանին և Լիդա

ևոնի Ասուլյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող 06-044-0007-0008 կադաստրային ծածկագրի տակ գտնվող՝ 0.14488 հա հողամասում ինքնակամ կառուցված՝ 112.8 քմ արտաքին մակերեսով բնակելի տունը, 104.6 քմ արտաքին մակերեսով ավտոտնակը, 10.6 քմ արտաքին մակերեսով սանհանգույցը և 13.5 քմ ընդհանուր մակերեսով պարիսպները:

2. Օրինականացման համար համայնքի բյուջե վճարել՝ 112.8 քմ արտաքին մակերեսով բնակելի տան համար 71.180 (յոթանասունմեկ հազար հարյուր ութանասուն) ՀՀ դրամ, 104.6 քմ արտաքին մակերեսով ավտոտնակի համար 39.610 (երեսունինը հազար վեց հարյուր տաս) ՀՀ դրամ, 10.6 քմ արտաքին մակերեսով սանհանգույցի համար 4020(չորս հազար քսան) ՀՀ դրամ, 13.5 քմ ընդհանուր մակերեսով պարիսպների համար 5120 (հինգ հազար հարյուր քսան) ՀՀ դրամ: Ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման վճարի չափը կազմում է՝ 119.930 (մեկ հարյուր տասնինը հազար ինը հարյուր երեսուն) ՀՀ դրամ, որը վճարվում է Լոռի Բերդ համայնքի բյուջեի թիվ 900255001324 հաշվեհամարին:

3. Օրինականացման համար սահմանված վճարը որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հետո 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

4. Թիվ 1811263 սեփականության վկայականի համաձայն պետական գրնցում ստացած՝ 112.7 քմ մակերեսով թիվ 1 կիսակառույց բնակելի տունը և 35.7 քմ մակերեսով թիվ 2 պարիսպը, շինությունները կառուցելու ժամանակ քանդվել են:

5. ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի, գ.Լոռի Բերդ, Սայաթ-Նովա փողոց, 1-ին փակուղի թիվ 2 հասցեի 06-044-0007-0008 կադաստրային ծածկագի տակ գտնվող հողամասի մակերեսի չափը ճշտել ըստ՝ «ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ» ԱՁ-ի կողմից կազմված տեղագրական հատակագիծի և 0.14488 հա ճշտված հողամասի նկատմամբ ճանաչել՝ Ռաֆիկ Օհանիկի Ասուլյանին և Լիդա Լևոնի Ասուլյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից, որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

կ.տ

2021թ. հոկտեմբերի 11

գ. Լոռի Բերդ